ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի
Հովհ.Հովհաննիսյանի անվան թիվ 2հիմն.դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Թեստավորումը որպես սովորողների լեզվահաղորդակցական կարողություններիստուգման արդյունավետ միջոց

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Արմինե Ղազարյան

ԽՈՒՄԲ՝ III

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Մինասյան

2023թ

Բովանդակություն

Տիտղոսաթերթ

Ներածություն……3

Հետազոտության նպատակը, խնդիրները……4

Գլուխ 1 Թեստ, թեստի տեսակները……5

1.1 Թեստի կազմումը և կիրառումը դասապրոցեսում……6

1.2 Թեստը որպես ուսումնառության արդյունքների գնահատման ձև……7

Գլուխ 2 Թեստերի գործնական կիրառումը դպրոցում……8

2.1 Հայտորոշիչ և ամփոփիչ թեստերի կիրառումը անգլերենում……9

2.2 Թեստավորման արդյունավետությունը դասապրոցեսում……10

Եզրակացություն ……11

Գրականության ցանկ……12

Ներածություն

Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանվել են սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքներ, ներդրվել է գնահատման նոր մեթոդաբանություն: Ըստ հանրակրթության պետական նոր չափորոշչի՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականցվելու են միավորային և ձևավորող գնահատում, իսկ տարրական դպրոցում՝ միայն ձևավորող գնահատում:

Որևէ ուսումնական փուլ սկսելուց առաջ պետք է իրականացվի նախնական հայտորշում և ամփոփում, որի նպատակն է սովորողների նախնական, ընթացիկ և վերջնական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների վերհանումը, բացահայտումը, որն անհրաժեշտ է լինելու ուսումնական գործընթացը պլանավորելու և արդյունավետ կազմակերպելու համար:

Այս առումով ուսուցման նպատակ դնելիս կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի անհատական ունակությունները, այսինքն՝ կարևոր է ուսուցման գործընթացում տարբերակված մոտեցումը: Դա բացատրվում է նրանով, որ ոչ բոլոր աշակերտներն են կարող հավասարապես հասկանալ, ընկալել և տիրապետել ուսուցչի ներկայացրած նյութը:

Այն բանից հետո, երբ սովորողը որոշակի գիտելիք է ձեռք բերում որևէ ուսումնական առարկայից, ուսուցիչը պետք է գնահատի նրա գործունեությունը, իսկ գնահատումը պետք է լինի օբյեկտիվ՝ ցույց տալով աշակերտի կողմից ներկայացված ուսումնական նյութի յուրացման աստիճանը:

Վերջերս մանկավարժական պրակտիկայում գիտելիքների, հմտությունների և կարողությունների վերահսկման ավանդական ձևերի հետ մեկտեղ ավելի ու ավելի են կիրառվում թեստավորման տարբեր ձևեր: Թեստերը ամենաարդյունավետ, խնայողական և տեղեկատվական գործիքն են, որոնք թույլ են տալիս միաժամանակ լուծել մեծ թվով առաջադրանքներ: Այդ իսկ պատճառով էլ մենք անհրաժեշտ

համարեցինք սույն աշխատանքի շրջանակներում ներկայացնել թեստը՝ որպես ուսումնառության գնահատման օբյեկտիվ միջոց: Վերոնշյալ հանգամանքներով է պայմանավորված մեր աշխատանքի արդիականությունը:

Նպատակը. Որևէ ուսումնական փուլ սկսելուց առաջ, ընթացքում և ավարտին պետք է իրականացվի ստացած գիտելիքների ստուգում, որի նպատակն է սովորողների նախնական, ֆոնային գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների վերհանումը, բացահայտումը, որն անհրաժեշտ է լինելու ուսումնական գործընթացը պլանավորելու և արդյունավետ կազմակերպելու համար: Սույն աշխատանքի նպատակն է անգլերեն առարկայի դասաժամերին կատարել վերոնշյալ աշխատանքները և բացահայտել կրթական կարիքները:

Վերոնշյալ նպատակից ելնելով՝ մենք առաջադրել ենք հետևյալ **խնդիրները**

1.Կազմել ճիշտ և գրագետ թեստ

2.Արդեն պատրաստի թեստը արդյունավետ և նպատակային կիրառել դասապրոցեսում

3.Թեստի կիրաման արդյունքում բացահայտված, վերհանված խնդիրները ուսումնասիրել, վրլուծել և դրանց տալ համապարփակ լուծումներ:

Գլուխ 1 Թեստ, թեստի տեսակները

Թեստը որոշակի նպատակով բարեխղճորեն ընտրված առաջադրանք է կամ առաջադրանքների խումբ, որի նպատակն է հնարավորինս ճիշտ գնահատել սովորողների ձեռքբերումները, արժևորել նրանց ուսումնական գործունեությունը:

Ըստ տեսակների թեստը լինում են.

- Նախնական կամ հայտորոշիչ
- Ամփոփիչ
- Ընդհանուր գիտելիքների ստուգման թեստ
- Տեղակայման թեստեր

Թեստի բոլոր տեսակներում էլ կարելի է օգտագործել տարբեր տիպի՝ բազմակի ընտրության, լրացման կարճ պատասխանով, համապատասխանեցման առաջադրանքներ: Հարցերը պետք է ձևակերպվեն կարճ և հանարավորինս պարզ ու մատչելի:

Նախնական թեստերով մենք ստուգում ենք ընդհանուր գիտելիքները անցած թեմաներից, և հարցերը ընտրվում են հենց այդ թեմաներից: Բարդության աստիճանը՝ պարզից բարդ: Տևողությունը հարաբերականորեն երկար է:

Հայտորոշիչ թեստը իրականացվում է նյութը ուսումնասիրելուց առաջ, նյութի ուսումնասիրման ընթացքում և նյութի ուսումնասիրումից հետո: Հայտորոշման նպատակն է հետադարձ կապի միջոցով ուսուցիչ և աշակերտ գործունեության որակի բարելավումը:

Ամփոփիչ թեստի նպատակն է պարզել կիսամյակի կամ որևէ թեմայի ընթացքում սովորողի ձեռք բերած գիտելիքի և կրթության բովանդակության << կարողություններ և հմտություններ>> բաղադրիչի մակարդակը, ինչպես նաև պարզել թեմայի կամ կիսամյակի վերջում աշակերտի մնացորդային գիտելիքը: Ամփոփիչ թեստը կարող է իրագործվել բանավոր հարցման, գրավոր աշխատանքի կամ գործնական աձխատանքի միջոցով:

Ընդհանուր գիտելիքների ստուգման թեստերը տրվում են սովորողների ծրագրային նյութի յուրացման մակարդակը ճշտելու և ստուգելու նպատակով: Ընդհանուր գիտելիքների ստուգման թեստի հիմնական նպատակը' տվյալ առարկայից սովորողի չափորոշչային պահանջների և ամբողջ ծրագրային նյութի յուրացման մակարդակի ճշգրտումն ու գնահատումն է:

Այդպիսի թեստերից են դպրոցի պետական ավարտական և ընդունելության քննությունների թեստերը, տարրական դպրոցի 4-րդ դասարանի գիտելիքների ստուգման թեստերը, և այլն: Այս թեստերը կազմվում են ոչ թե դպրոցի, այլ մեկ ուրիշ կազմակերպությունների կողմից:

Տեղակայման թեստերը տրվում են դասընթացի սկզբում սովորողներին ըստ իրենց գիտելիքների և կարողությունների մակարդակի տեղակայելու համար: Այն կազմակերպվում է ուսումնական տարվա առաջին կամ երկրորդ շաբաթվա ընթացքում: Սովորողների մնացորդային գիտելիքներն ու պատրաստվածության ընդհանուր մակարդակը պարզելուց հետո, ուսուցիչը պլանավորում է իր հետագա անելիքը և աշխատանք տանում բացթողումների շտկման համար:

1.1 Թեստի կազմումը և կիրառումը դասապրոցեսում

Թեստ կազմելիս շատ կարևոր է պարզ պատկերացնել այն ուսումնական նպատակը, որի համար թեստը նախատեսված է: Առանց նպատակի հստակեցման թեստը հիմնականում վերածվում է առաջադրանքների անհասկանալի մի խմբի: Թեստի միջոցով ստուգվում են սովորողի գիտելիքները, կարողությունները, հմտությունները և արժեքային համակարգը: Թեստի նպատակն է՝ պարզել, թե սովորողը որքանով է յուրացրել ուսումնական նյութը: Արդյունքներն օգտագործվում են միավորային գնահատման կամ հայտորոշման նպատակով:

Թեստի արդյունքները վերլուծելով և մեկնաբանելով՝ կարելի է որոշել աշակերտների հետ հետագա անելիքները, ինչպես նաև ուսուցանվող նյութի առավել ընկալելի մեթոդի ընտրությունը: Թեստերն ազդում են ուսուցման ամբողջ գործընթացի վրա: Այդպիսի ազդեցությունը կոչվում է թեստի հակադարձ ազդեցություն, որը կարող է լինել դրական կամ բացասական: Թեստի դրական ազդեցությունն ուսուցման վրա գլխավորապես պայմանավորված է ստուգվող նյութի ընտրությամբ: Եթե այն ընդգրկում և արտացոլում է իրապես ուսուցանված և սովորողների կողմից ընկալած նյութերը, ապա թեստի ազդեցությունը համարվում է դրական, իսկ եթե թեստը բացասաբար է անդրադառնում ուսուցման վրա, ապա ազդեցությունը բացասական է: Բոլորիս հայտնի է ընդունելության թեստերի բացասական ազդեցությունը դպրոցի և ուսուցման վրա, որի հիմնական նպատակն է ընդգրկել այնպիսի նյութեր, որոնք ուսուցման ընթացքում չի ամրապնդվում, որը հանգեցնում է մասնավոր պարապմունքների և հետևաբար դասերին չներկայանալուն:

Իսկ ինչպե՞ս ստեղծել լավ թեստեր: Լավ թեստեր կազմելու համար կան մի շարք գործոններ, որոնք պետք է անպայմանորեն հաշվի առնել: Դրանք են՝ թեստերի կազմելու հիմնական սկզբունքները: Լավ թեստերը պետք է համապատասխանեն հետևյալ սկզբունքներին՝ հուսալիություն, հավաստիություն, անաչառություն, արդյունավետություն:

1.2 Թեստը որպես ուսումնառության արդյունքների գնահատման ձև

Ցանկացած կրթական համակարգի համար սովորողների գրտելիքների գնահատումը ամենաբարդ և հիմնական խնդիրներից մեկն է: Մենք, տարիների մեր փորձից ելնելով ,կարող ենք ասել, որ թեստը գիտելիքների, կարողությունների, հմտությունների և անհատականության բացահայտման և ուսումնասիրության հիմնական ձևն է:Թեստաբանությունը, որպես տեսություն և պրակտիկա, գոյություն ունի արդեն 120 տարի ,և այդ ընթացքում մարդկային գործունեության տարբեր ոլորտներում թեստերի կիրառման վերաբերյալ հսկայական փորձ է կուտակվել: Այսպիսով մենք ելնելով մեր

դասավանդման փորձից կարող ենա փաստել, որ թեստավորումը իր օբյեկտիվությամբ և արդյունքների ստացման արագությամբ գերազանցում է արդյունքների գնահատման բազմաթիվ ձևերի:

Ելնելով թեստավորման տեխնոլոգիայի արդիականությունից և գիտելիքների գնահատման այլ մեթոդների մեջ դրա եզակիությունից՝ հնարավոր է որոշել թեստավորման հիմնական առավելությունները.

- Սովորողների շրջանում հետաքրքրության զարգացում այն առարկաների նկատմամբ, որոնց համար նախատեսված է թեստը
- Թեստին նախապատրաստման ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ակտիվացում
- սովորողների գիտակցության և անձնային պատասխանատվության զարգացում իրենց թեստավորման արդյունքների համար
- Սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների մակարդակի բացահայտում ստուգվող առարկաների շրջանակներում.
- աջակցություն ուսանողներին ձեռք բերված ուսումնառության արդյունքների մակարդակը որոշելու և հետագա թեստավորման պլանավորման հարցում
- աջակցություն ուսուցիչներին անհատական ուսուցման արդյունքների և սովորողների զարգացման գնահատման, հսկողության և չափման նյութերի շրջանակի ընդլայնման, դասավանդման մեթոդների ճշգրտման հարցում:

Թեստ կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել նպատակները, որոնց համաձայն իրականացվում է թեստավորում, նյութի բնույթը, որի յուրացման մակարդակը պետք է պարզվի և թեստավորվողների տարիքային առանձնահատկությունները:

Ինչպես գիտելիքի գնահատման ցանկացած մեթոդաբանություն, թեստավորման տեխնոլոգիան պարունակում է մի շարք պարտադիր պահանջներ թեստային նյութերը կազմելու համար՝ նպատակի առկայություն, հակիրճություն, արտադրողականություն, արտահայտման տրամաբանական ձև, պատասխանների համար նախատեսված տեղի առկայություն, գնահատման նույն կանոնների

առկայության ապահովում բոլոր հարցվողների համար, հրահանգների համապատասխանությունը առաջադրանքի ձևին և բովանդակությանը:

Առաջադրանքը պետք է լինի հեշտ հասկանալի, միանշանակ և հնարավորինս կարճ:

Ավանդական հարցերը, որոնք պահանջում են մանրամասն պատասխաններ, խորհուրդ չի տրվում ներառել թեստում:

Հարկավոր է թեստային առաջադրանքներում ներառել այն հիմնական, էական դրույթները, որոնք սովորողը պետք է իմանա առարկան ուսումնասիրելու արդյունքում, հետևաբար,այնպիսի թեստը որը ներառում է առարկայի վերաբերյալ բոլոր հարցերը, միշտ չէ, որ ռացիոնալ է:

Ոչ պակաս կարևոր է թեստի տեսական և առաջադրանքների հարաբերակցությունը, ինչպես նաև հարցի և պատասխանի տառատեսակի և գույնի ընտրությունը:

Գլուխ 2 Թեստերի գործնական կիրառումը դպրոցում

2.1 Հայտորոշիչ և ամփոփիչ թեստերի կիրառումը անգլերենում

Թեստերի արդյունավետությունը գործնականում փորձարկելու համար մենք մշակել ենք թեստային նյութեր 3-րդ և 5-րդ դասարաններում սովորող աշակերտների գիտելիքներ մակարդակի չափման համար:

3-րդ դասարանում սովորող աշակերտների համար կազմված ամփոփիչ թեստի հիմնական նպատակն է ամբողջական թեմայի կամ կիսամյակի ընթացքում անցած ծրագրային նյութի յուրացման մակարդակի ստուգումն ու ամփոփումն է առարկայական չափորոշչի և ծրագրի պահանջներին համապատասխան: Ամփոփիչ թեստեր անցկացվում են կիսամյակը ամփոփելու նպատակով, որը տրվում է կիսամյակի վերջում' բացահայտելու կիսամյակի ընթացքում ուսումնասիրած ծրագրային ամբողջ նյութի յուրացման աստիճանը,տնօրինության կողմից վերհսկողություն ապահովելու նպատակով:

Հայտորոշիչ թեստի նմուշօրինակ

Հատկորոշիչներ

Ուսումնական առարկան՝ անգլերեն

Դասարան՝ 4-րդ

Առաջադրանքների տեսակները՝ կարճ պատասխան, բաց թողնված բառեր

Առաջադրանքների քանակը՝ 5

Հատկացվող ժամանակը՝ 45րոպե

Նպատակը՝ նախնական գիտելիքների ստուգում

TEST 1

1. **Fill in the correct possessive pronouns. (2)**

my your his he its our their

This is my family

1.That's _____ father. He is washing the car.

2. This is _____ mother. We never have to clean _____ bedrooms.

3. That's _____ brother over there. _____ name is Jake.

4.That's my sister. ____ name is Lynn. She has a girl-friend. They always plays with _____ dolls.

5. That's Misty. It is _____ cat. _____ favourite food is fish.

6.Can you tell me about _____ family?

2.Fill in the correct form of the verb "to be" (am, are, is). (2)

1.They ____ friends.

2.You ____ a boy.

3. Sam ____ at home now.

4.He ____ in the museum.

5. I ____ ten years old.

3. Make the sentences interrogative and negative.(4)

1.My mother is in the kitchen.

2.You are cleaning the room.

3.His father is watering the flowers.

---

4. Ann is in the classroom.

4.Read the text and complete the sentences given below. (2)

This is Jane. Jane is my friend. Jane is nine. She is not very tall. She has long fair hair and blue eyes. Her cheeks are red and her nose is small. Jane is a kind and a nice girl.

1.Jane is a nice ----------.

2.Her cheeks are ---------- .

3. Her nose is---------- .

4. Jane is my---------- .

Թեստային առաջադրանքների արդյունքների ստուգումն իրականացվում է ըստ աղյուսակ 1-ում տրված չափանիշների:

№	Ճիշտ պատասխանների տոկոսը	Գնահատական
1	91-100 %	Գերազանց
2	76-90 %	լավ
3	61-75 %	Բավարար
4	0-60 %	Անբավարար

Քանի որ նման թեստեր հաճախակի կարելի է կիրառել, կարևոր է մշակել ստուգման համար արագ և արդյունավետ տարբերակներ:Գործընթացը մեթոդապես ճիշտ կիրառելու դեպքում հնարավոր կլինի խնայել ժամանակը և ջանքերը:Օրինակ՝ ուսուցիչը առաջադրանքների պատասխանները գրել գրատախտակին կամ ցուցապաստառին և սովորողներին ցույց տալ թեստի կատարման ավարտից հետո:Սովորողները հնարավորություն կունենան համեմատելու իրենց աշխատանքի արդյունքները ճիշտ պատասխանների հետ և ինքնուրույն շտկել բացթողումները:Ստուգման տարբերակ է նաև դասընկերոջ հետ աշխատանքների փոխանակումը, փոխադարձ ստուգումը և քննարկումը:Ուսուցիչը կարող է թեստում ներառված բովանդակությունը ներկայացնել մի փոքր այլ տարբերակով և սովորողները ոչ թե մեխանիկորեն, այլ մտավոր աշխատելով հասկանան, ճիշտ են կատարել աշխատանքը թե՝ ոչ:

Ամփոփիչ թեստի նմուշօրինակ

Հատկորոշիչները

Ուսումնական առարկան՝ անգլերեն
Հարցարանի համարը՝ 2
Հարցարանի տարատեսակը՝ թեմատիկ գրավոր աշխատանք

Դասարան՝ 7
Թեմաները՝ prepositions, verb tense
Առաջադրանքների քանակը՝ 5
Առաջադրանքների առավելագույն միավորը՝ 10
Նախատեսված ժամանակը՝ 45 րոպե

SUMMATIVE TEST

I. Read the text and Choose the right word or phrase to complete the sentences.

IN THE CLASSROOM

The children are in the classroom now. They are sitting at their desks in rows facing the teacher who is writing on a large board with a piece of chalk. There are textbooks and exercise-books on her table. Later the children will put then into their bags to do their homework at home. Some of them are writing in their copy-books with their pens. Some of them are drawing in their sketch-books with a pencil. They are using their rulers to draw straight lines. If they make a mistake they can remove it with a rubber. On the walls there are wall charts, maps and a timetable.

1. The children are ..... .
   a. in the library b. in the classroom
2. They are sitting in ..... .
   a. rows b. groups
3. The teacher is ..... .
   a. explaining a rule b. writing on a chalkboard
4. She is writing on the board with a ..... .
   a. crayon b. piece of chalk
5. On the walls there are ..... .
   a. pictures and shelves b. wall charts and maps

II. Complete the sentences with the correct form of the verbs in the brackets.

1. If you (to heat) the ice, it (melt).

_____

2. If I (not to go) to bed early, I (to be) tired tomorrow.

_____

3. If people (to eat) too many sweets, they (to get) fat .

_____

4. I (to buy) a new dress if I (to have) enough money.

_____

5. We (to take) a taxi if it (to rain).

_____

III.Fill in the correct preposition of time (in, on, at) if necessary.

1.Tom and Ann's wedding is ___ next Sunday.

2.Mother sometimes works until late ___ night.

3.His new book will be published ___ April.

4.My grandfather reads newspaper ___ every day.

5.We shall have guests ___ Monday.

6.Do you stay at home ___ Christmas?

7.The film began ___ 2 o'clock.

8.What do you usually do ___ New Year Day?

IV. Match the two parts of the sentences

1.It's raining,	a.he has born in London
2.He is English,	b.buy and sell houses?
3.Does he	c.let's sit in the shadow.
4.I cannot eat any more,	d.I am fed up.
5.It is very hot	e.take an umbrella.

1._____

2._____

3._____

4._____

5._____

V. Write the sentences in the past forms.

1. The children are playing in the playground

_____

2.He has bought a new car.

_____

3.We go for a walk every day.

_____

4.My little sister does not know English.

_____

Ամփոփիչ թեստի ստուգման արդյունքներից պարզ դարձավ տվյալ թեմայից աշակերտների գիտելիքների մակարդակը: Քանի որ մեր թեստը հեշտ հաղթահարելի էր, աշակերտների մեծամասնությունը կարողացավ հաղթահարել դրականի շեմը:

2.2 Թեստավորման արդյունավետությունը դասապրոցեսում

Թեստերի կիրառումը գործնականում արդյունավետ է դասապրոցեսի ընթացքում: Թեստավորումը կարող ենք իրականացնել ընթացիկ և վերջնական մակարդակներում: Աշակերտների գիտելիքների ընթացիկ վերահսկման նպատակն է ստուգել և համակարգված կերպով գնահատել գիտելիքները ուսումնական նյութի փոքր միավորների վերաբերյալ, բացահայտել գիտելիքների բացերը ուսումնասիրված թեմաների: Սովորաբար ընթացիկ թեստային նյութերը պարունակում են առաջադրանքներ, որոնք դասավորված են դժվարության աճման կարգով, որպեսզի բացահայտեն ուսումնական նյութի յուրացման առաջին իսկ խնդիրները:

Վերջնական թեստավորման հիմնական նպատակը ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատումն է, որը կենտրոնացած է յուրաքանչյուր առարկայի դասընթացի բովանդակության զարգացման առանձնահատկությունների կամ ուսանողների տարբերակման վրա:

Եզրակացություն

Մեր ուսումասիրությունները ապացույցն են այն բանի, որ ցանկացած թեստ պետք է նպաստի սովորողի ուսուցման բարելավմանը և առաջընթացին: Թեստերը որպես չափման գործիք, լավագույնս կծառայեն նպատակին, եթե կազմվեն նպատակային, առարկայական չափորոշչի և ծրագրային նյութին համապատասխան, անցնեն փորձաքննություն,հաշվի առնվեն թեստ կազմելու պահանջները և միջազգային փորձը:

Գրականության ցանկ

1.Օտար լեզուները Հայաստանում գիտահետազոտական հանդես 2008
2.Ս. Միքայելյան ,,Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման միջոց,, Երևան 2010
3.Մաթեմատիկան դպրոցում 2013
4.Համացանց
5.Վերապատրաստման նյութեր